Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԵՎ ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ
(XII դ. – XIX դարավերջ)

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մինչև 1441 թվականը, երբ հայոց կաթողիկոսության Մայր Աթոռը Կիլիկիայի հայոց պետության Սիս մայրաքաղաքից տեղափոխվեց իր նախնավանդ ու սրբազործված վայրը՝ Ս. Էջմիածին, Աղթամարի կաթողիկոսական Աթոռը կապեր էր պահպանում Արևելյան Հայաստանի եկեղեցիների հետ՝ հավատարիմ մնալով հայադավան ուղղափառությանն ու արևելահայ եկեղեցական կենտրոնների դավանական ուղեգծին՝ քամահրելով կիլիկիահայ հոգևոր այրերի արևմտամետ կոչերը: Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին (1153–1198) Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Բ-ին ուղղված թղթում նշում էր, որ, իբր, իր դավանական կողմնորոշման հետևորդ են նաև «բոլոր գաւառն Վասպուրականի եւ որ անդ՝ հռչակաւոր ուխտն Վարագ»[1]: Սակայն այս պնդումը թեական էր ու չապացուցված:

Թեև Աղթամարի կաթողիկոսության հռչակման հաջորդ տարում՝ 1114 թ. Կիլիկիայի Սև լեռների (Սմանոս) Կարմիր վանքում գումարված եկեղեցաժողովը նզովքի վճիռ կայացրեց այդ կաթողիկոսության նկատմամբ, սակայն դա չխանգարեց վերջինիս և արևելահայ եկեղեցիների միջև հարաբերությունների պահպանմանը: Շիրակում՝ Հոռոմոսի վանքի մեջ գրված հիշատակարանում, նշվում է, որ հայոց ՈՂԴ (1245) թվականին Աղթամարի կաթողիկոս Խեդենեկ Բ Արծրունին իր կողակից Մարջանի հետ նույն վանքին են նվիրաբերել «Թեղանո շամբ» կոչված վարելադաշտը, որը, նույն աղբյուրի համաձայն, Խեդենեկին և իր տիկնոջն էր նվիրել Շիրակի իշխաններից մեկը: Այս ընծայատրության դիմաց Հոռոմոսի մենաստանի միաբանները Բարսեղ վանահոր գլխավորությամբ սահմանել են «զտաւն Սուրբ Կարապետին բոլոր եկեղեցիքս պատարագել զՔրիստոս... եւ յետ ելից մերոց ի մեր յանուն կատարեն ի տաւնի Նաւասարդի»[2]: Այս փաստը վկայում է, որ Աղթամարի կաթողիկոսության և Շիրակի եկեղեցական նշանավոր կենտրոնի՝ Հոռոմոսի վանքի միջև պահպանվել է հոգևոր, ծիսական հաղորդակցությունը, ինչից հետևում է, որ Աղթամարի Աթոռը գերադասել է հետևել Զաքարյանների հայկական իշխանության մեջ հովվապետող հոգևորականների ծիսադավանական ուղեգծին: Դրան, անշուշտ, էականորեն նպաստում էր հայության ազգային և հոգևոր-մշակու-

---

[1] *Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թուղթք եւ ճառք, Վենետիկ, 1838, էջ 215–216:*

[2] *Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 88:*

թային ընդհանրությունը, հայրենավանդ արժեքների հանդեպ հավատարմությունը:

Վասպուրականի, Մոկքի և Հարավային Հայաստանի մյուս մասերի հայ բնակչությունը հեծում էր օսմանյան լծի տակ, մինչդեռ Արևելյան Հայաստանը պահպանում էր ինքնուրույնությունը: Հայաստանի երկու հատվածների միջև եղած կապերը հուսադրող էին Հարավային Հայաստանի բնակչության համար: Դրանք նպաստում էին դաժան բռնատիրողների հարուցած չարաշահումների, կրոնական հալածանքների պայմաններում երկրի այդ մասի բնակչությանը համակած հուսահատումի ու լքվածության թոթափմանը: Անհրաժեշտ էր, որպեսզի խլված հայրենի եզերքում արևմտահայությունը պահպաներ իր հոգևոր անկախությունը և կուլ չգնար հոգուն ծանրացած դաժան իրականությանը: Ժամանակակից վասպուրականցի գրիչը 1326 թ. թողած հիշատակարանում շեշտում է ցավատանջ ու հոգին լլկող կացությունը, որի պայմաններում «ոչ գոյր մեր թագաւոր կամ իշխան կամ դատաւոր կամ այցելու կամ առաջնորդ կամ փրկող կեցուցանող, որ ազատէր զմեզ յայլասեռից և ի չար թշնամեաց...»[3]:

Զազիր իրականության պայմաններում, շնորհիվ Աղթամարի Աթոռի գոյության և, իհարկե, արևելահայերի հետ ունեցած հոգևոր-դավանական միասնության, արևմտահայերը պահպանում էին հայրենի երկրի անկախության վերականգնման ակնկալիքները: Ուշագրավ է, որ 1336 թ. օրինակված մի ձեռագրում Աղթամարի կաթողիկոսական Աթոռը հիշվում է որպես «Աթոռ հայրապետական և թագավորական»[4] ՝ մարմնավորելով ժողովրդի մեջ պահպանվող քաղաքական հույսերը, որոնք կարող էին սնուցվել նաև Հայաստանի հյուսիսարևելյան մասերում պետական անկախության գոյությամբ:

Աղթամարի կաթողիկոսությունը հաճախ հանդես էր գալիս որպես միջնորդ ժողովրդի ու օտար իշխանությունների միջև և կարողանում էր ի դերև հանել նրանց անօրինական նկրտումները, նաև պաշտպանել ժողովրդի հոգևոր ու բարոյական նեցուկը հանդիսացող եկեղեցուն: Այսպես, 1336 թվականին, արդեն փլուզման շրջափուլ թևակոխած մոնղոլ-թաթարական Հուլավյան պետության խան Ալի փաշան կայացնում է անագորույն վճիռ՝ ավերել քրիստոնեական եկեղեցիները: Եվ, գրում է ժամանակագրողը. «Քակեցին ի բազում տեղիս՝ ի Մօսլայ մինչ ի Խլաթ և ի Սալամաստ...»[5]: Փաշայի դաժան հրամանի գործադրումը կասեցնելու նպատակադրումով Աղթամարի Զաքարիա Ա կաթողիկոսը մեկնում է նրա մոտ և համոզում ետ վերցնել իր արձակած վճիռը՝ ժողովրդին համակելով հույսով ու հավատով: Ուշագրավ է, որ նույն ժամանակ Լիմ կղզու մենաստանում գրիչն իր արտագրած Ավետարանում թողած հիշատակարանում գրում է, որ Զաքարիա Ա հայրապետն իր այդ քայլով «զհաւատս Հայոց

[3] *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 355:*

[4] *Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Ե. Լալայեան, Թիֆլիս, 1915, սյունակ 193–194:*

[5] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, աշխատ. Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 158:*

նոր գնեաց ի յանօրէն առաջնորդաց և զեկեղեցիքս ազատեաց Աստուծոյ տեսչութեամբն եւ ձեռաւք իւրովք... ի դառն և ի վշտաբեր ժամանակիս»[6]:

Աղթամարի կաթողիկոսությունը շարունակում էր կրել 1114 թ. Սև լեռների Կարմիր վանքում կայացված նզովքի ճնշող ազդեցությունը: Թեև 1290 և 1295 թվականներին բանադրանքը վերացնելու համար փորձեր ձեռնարկվեցին, սակայն դրանք սպասված արդյունքները չտվեցին[7]:

Աղթամարի Աթոռի վրայից միջնադարի ազդու զենքի՝ բանադրանքի վերացման անհրաժեշտությունը ծառացած էր նաև արևելահայ հոգևոր հայրերի առջև: Դա էր թելադրում Հարավային Հայաստանի եկեղեցականների հետ նրանց հոգևոր ընդհանրությունը: Բացի այդ՝ հարկավոր էր վերացնել օտար եկեղեցիների կողմից հայերին ուղղված անմիաբանության նախատինքը: Ժամանակակից գրիչը նշում է, որ քրիստոնյա ազգերը նախատում են հայերին՝ նրանց համարելով «մոլորեալք... և անհնազանդ գլխոյն իւրեանց»[8]:

1409 թ. մեծահամբավ Գրիգոր Տաթևացին, արտահայտելով արևելահայ հոգևորականության ճնշող մեծամասնության կամքը, վճռական քայլերի դիմեց՝ Աղթամարի վրայից նզովքի կապանքները վերացնելու համար: Նա, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, «մեծահանդէս ժողով արարեալ՝ արձակեաց զամենեսեան ի կապանաց հնոց կաթողիկոսացն եւ վարժապետացն մերոց»[9]: Անշուշտ, Տաթևացին իր այդ ձեռնարկմամբ միտված էր ավելի հեռամետ նպատակների՝ զորացնել հայրենի բնաշխարհի եկեղեցական կենտրոնները, միաբանել Հայաստանի երկու մասերի հոգևորականությանը և այդ հիմքի վրա օտար հորիզոններում դեգերող հայոց Մայր Աթոռը վերադարձնել իր սրբազնագործված նախնավանդ օրրան՝ Ս. Էջմիածին[10]:

Գրիգոր Տաթևացու ձեռնարկումը լայն արձագանք գտավ Հարավային Հայաստանի եկեղեցական կենտրոններում և բնակչության մեջ: 1410 թ. Մեծոփա վանքում Տաթևացու Քարոզգիրքն ընդօրինակող Ղազար գրիչն իր թողած հիշատակարանում գրում է, որ Տաթևացին «արձակեաց զմեզ ի բանադրութենէ անիծից... կաթողիկոսացն Աղթամարայ և եբեր ազգիս Հայոց զփրկական համբաւն և առաջնորդեաց արժանաւորացն մտանել ի միաբանութիւն և ի հնազանդութիւն գերադրական և Սուրբ Աթոռոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»[11]: Համաձայն Գր. Տաթևացու վկայության՝ բանադրանքից արձակվում էին «զկաթողիկոսն Ախթամարայ զտէր Դաւիթ եպիսկոպոսօք և վարդապետօքն ամենայն քահանայօք և սարկաւագօք, ամենայն

---

[6] *Գ. Մրվանձտեանց. Թորոս Աղբար, հ. Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 253:*

[7] *Մ. Իզմիրլեան. Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ և Աղթամար ու Սիս, Կ. Պոլիս, 1881, էջ 293, ծան.:*

[8] *Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 4669, թ. 197ա:*

[9] *Թովմա Մեծոփեցի. Պատմագրություն, աշխատ. Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 81:*

[10] *Գրիգոր Տաթևացին Աղթամարի վրայից բանադրանքը վերացնելու կապակցությամբ շարադրել է մի աշխատություն՝ □Բանք գեղեցիկ և յոյժ պիտանի վասն աթոռոյն Աղթամարայ, որ է ի ներքոյ բանադրանաց□ վերտառությամբ (տե՛ս Մատենադարան, ձեռ. 4669):*

[11] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401–1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 105:*

աստիճանաւորքն ժողովրդականօք և կանայք ամենայն կենդանիք և հանգուցեալք»՝ թոթափելով նաև իրենց բոլոր մեղքերը[12]*:*

Սակայն այս անգամ նույնպես Աղթամարի Աթոռի վրա ծանրացած բանադրանքը չարձակվեց՝ վերջինիս և Սսի Աթոռի միջև գցված ծիսադավանական ու կանոնական անջրպետների պատճառով: Հատկանշական է, որ վասպուրականցի և մոկացի գրիչներն իրենց թողած հիշատակարաններում Սսի կաթողիկոսներին չեն հիշում «Ամենայն Հայոց» կամ «Հայոց» վերադիրով: Այսպես, 1417 թ. Վասպուրականի Բզնունիք գավառի Ցիպնա վանքում օրինակված Ոսկեփորիկում տեղ գտած հիշատակարանում նշված է, որ ձեռագիրն ավարտվել է «ի կաթողիկոսութեան Սրսայ Գրիգորի և յԱղթամարայ կաթողիկոսութեան Տէր Դաւթի...»[13]*: Նույ թվականին Մոկաց Խիզան քաղաքում ձեռագիր արտագրող գրիչն իր թողած հիշատակարանում նշում է, որ այն ավարտել է «ի հայրապետութեան Տեառն Դաւթի Աղթամարեցւոյ»*[14]*: Այդպիսով գրիչն իրենց հայրապետ է ճանաչում ոչ թե Սսի, այլ Աղթամարի կաթողիկոսին: 1417 թ. Մոկքի Ջերմաձոր գավառի Ակոռ վանքում ձեռագիր օրինակած գրիչը նշում է, որ այն կատարել է «ի մերոյ հայրապետութեան Տեառն Դաւթի Աղթամարեցւոյ...»*[15]*՝ առանց հիշատակելու Սսի աթոռակալին: Նույնն ենք տեսնում նաև այդ թվին Ռշտունիք գավառի Նարեկավանքում, ապա նույն գավառի ս. Հակոբա և ս. Վարդան վանքերում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում*[16] *և այլն:*

XV դ. սկզբներից արևելահայ հոգևորականության մեջ հաստատվում էր հայոց ընդհանրական Աթոռը Սսից Ս. Էջմիածին տեղափոխելու խնդիրը: Դրա իրականացման գործում իր նպաստը բերեց նաև Աղթամարի կաթողիկոսությունը: 1441 թ. Մայր Աթոռը վերահաստատվեց Ս. Էջմիածնում, հայոց կաթողիկոս ընտրված Կիրակոս Վիրապեցին Աղթամարի կաթողիկոսության վրայից հանեց բանադրանքը: Հայրենի երկրում երկու Աթոռները ծիսադավանական և կանոնական առումով միաշավիղ էին՝ ազգային ու կրոնական ընդհանրականության բնական հատկանիշներով: Այդ հիմքի վրա 1460 թ. Աղթամարի Զաքարիա Գ կաթողիկոսը բազմում է Ս. Էջմիածնի Մայր Աթոռին՝ որպես «ինքնակալ պատրիարգ ընդհանուր ամենայն քրիստոնեական ազգի»[17]*: Նույն թվականին Վասպուրականի Արծկե քաղաքում ճաշոց օրինակած գրիչը Զաքարիա Գ-ին հիշատակում է որպես «ընդհանուր Հայոց կաթողիկոս», շեշտում, որ ծանր իրավիճակում, երբ «շարժեալ են ի վերայ քրիստոնէից անհնարին վիշտ և տառապանք յազգաց անաւրինաց՝ հարկապահանջութիւն», Զաքարիան ողորմագութ վերաբերմունքով ամոքում էր տնանկների, կարիքավորների վիշտն ու տառապանքները:*

---

[12] *Մատենադարան, ձեռ. 4669, թ. 202ա:*

[13] *Նստարք Հայոց. հաւաքեալ և ի լոյս ածեալ Ղ. Փիրղալէմեան, Կ. Պոլիս, 1888, էջ 53:*

[14] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 199:*

[15] *Նստարք Հայոց, էջ 51:*

[16] *Տե՛ս նույն տեղում, էջ 52–53, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 216–217, 220, 243 և այլն:*

[17] *Ա ռ ա ք ե լ Դ ա ւ ր ի ժ ե ց ի. Գիրք պատմութեանց, աշխատ. Է. Խանլարեանի, Երևան, 1990, էջ 332:*

Նա խնամածու էր նաև «ուսումնասիրաց և կրոնաւորաց»[18]:

Առաքել Դավրիժեցու հավաստմամբ՝ Զաքարիա Գ-ը միավորում է երկու Աթոռները և «արարեալ զաշխարհ ամենայն՝ լինիլ մի հոտ և մի հովիւ ըստ բանին Տեառն»՝ ժողովրդին համախմբելով Հայոց ընդհանրական Աթոռի շուրջը: Պատմագրի վկայությամբ՝ Զաքարիա կաթողիկոսը «հովուէր զամենեսեան ի հաւատս ուղղափառ Նիկիականի սուրբ դաւանութեան»[19]: Ըստ այդմ՝ Զաքարիան հավատարիմ է մնացել նախնյաց քրիստոնեական հավատքին, որը խարսխված էր Նիկիական և Եփեսոսյան հավատո դավանության վրա:

Աղթամարի կաթողիկոսությունն, Էջմիածնի Ընդհանրական Գահաթոռի զորավոր աջակցությամբ, շարունակեց ազգաշահ առաքելությունը՝ իր հոտին առաջնորդելով հայադավան ուղղափառ հավատքի ավանդական շավղով՝ իրեն ապավինած ժողովրդի մեջ անշեջ պահելով ազգային հոգին ու նախնիներից ավանդված քրիստոնեական հավատը: Էջմիածնի Մայր Աթոռի հետ հաղորդակցությունն էականորեն նպաստում էր Աղթամարի կաթողիկոսության դիրքերի ամրապնդմանը, ինչը հույժ կարևոր էր քաղաքական աղմկածուփ իրականության պայմաններում: Հետևելով Էջմիածնի առաքելաշավիղ Աթոռի որդեգրած ուղեգծին՝ Աղթամարի կաթողիկոսությունն իրեն ևս համարում էր «առաքելադիր»՝ նույնիսկ հանդես գալով որպես բովանդակ հայության հոգևոր ավանդապահ՝ իր հիմնումն աղերսելով Գրիգոր Նարեկացու սրբաշունչ անվան հետ: 1471 թ. Աղթամարի Ս. Խաչ վանքում Ներսես եպիսկոպոսն օրինակում է եպիսկոպոսի և կաթողիկոսի ձեռնադրության և թագավորի օծման ծեսերը կատարելու վերաբերյալ մի Մաշտոց, որտեղ թողած հիշատակարանում Աղթամարի հայրապետ Ստեփանոս Դ-ը հիշվում է որպես «կաթողիկոս եւ պատրիարգ ամենայն Հայկազեան արեգական սեռի և Աղթամարայ առաքելադիր Սուրբ Աթոռոյ, զոր հաստատեալ է Սրբոյն Գրիգոր Նարեկացի, որ գերագույն իմն գտաւքան զառաքեալսն...»[20]: Նշված Մաշտոցը ծառայել էր որպես ծիսամատյան, երբ դեռևս 1466 թ. կարա-կոյունլուների տիրակալ Ջհանշահի համաձայնությամբ Ստեփանոս Դ հայրապետի կողմից թագավոր էր օծվել Սմբատ Սեֆեդինյանը, որը դիտվում էր մորական գծով Գագիկ Արծրունի թագավորի տոհմակից: Սմբատը թագավոր օծվեց, անշուշտ, Էջմիածնի կաթողիկոսի հավանությամբ: Թեև նրա «թագավոր» տիտղոսը երևութական էր՝ զուրկ քաղաքական բովանդակությունից, բայց նրան թագավոր օծելու միջոցով Եկեղեցին կամենում էր ժողովրդի մեջ հառնել տալ հայոց անցյալի փառալից հիշատակները՝ նրա ներկան փրկելու հույսով: Իհարկե, Էջմիածնի միաբանության համաձայնությամբ էր, որ Գրիգոր Ժ հայոց կաթողիկոսի (1443–1466) մահվան տարում Ստեփանոս Դ-ը կարճատև ժամանակ բազմեց Էջմիածնի կաթողիկոսի Աթոռին[21],մինչև որ նույն տարում

---

[18] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ (1451–1480 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 156:*

[19] *Ա ռ ա ք ե լ Դ ա ւ ր ի ժ ե ց ի, էջ 332:*

[20] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 308:*

[21] *Նստարք Հայոց, էջ 229–230:*

նոր կաթողիկոս ընտրվեց Արիստակես Բ-ը (1466–1469): Աղթամարի աթոռակալները, հետևելով Էջմիածնի Ընդհանրական Աթոռին, նպատակասլաց ճիգերով շարունակում էին հայոց բնաշխարհի հարավային մասում քրիստոնեական հավատի պահապանի ծանրալուծ առաքելությունը՝ ժողովրդին զինելով հույսով ու համբերությամբ, մի ժամանակ, երբ ապագան թվում էր անհեռանկար: 1478 թ. Աղթամարի Ս. Խաչ վանքում Ավետարան օրինակած գրիչն իր թողած հիշատակարանում շեշտում է հայրենիքի դառնաղետ կացությունը, երբ «երկիր ամենայն երերալ կաց և տատանեալ ձեռաց անօրէն ազգին նետողաց»[22]: Իսկ 1484 թ. Վան քաղաքում ձեռագիր արտագրող Ազարիան գրում է.

«Չգիտեմք, թէ ինչ տի լինի Հայոց ազգիս

Ի թիւնաւոր աւձից միջիս շիւարեալ կանք ողորմելի...»[23]:

Օրհասական վիճակում գտնվող Հարավային Հայաստանի ժողովուրդը ավանդական ոգով շարունակում էր պահպանել Աղթամարի կաթողիկոսության, իբրև «թագավորական և հայրապետական» Աթոռի նկատմամբ տածած հույսը, որին նա ապավինում էր ծանր պահերին, երբ, ինչպես նշում է 1488 թ. Վարագավանքում ճաշոց արտագրած գրիչը, վասպուրականցիները մատնված էին վշտի ու տվայտանքների՝ կրելով անլուր լլկանքներ «ի ձեռն այլասեռից ազգաց, զի զամենեսեան չարչարեն և նեղեն, տուժեն և տուգանեն, կեղեն և կեղեքեն և այլ ազգիազգի վշտաւք տանջեն...»[24]: Նման պայմաններում անգամ շատերին չէին լքում Հայաստանի անկախությունը վերականգնելու չխամրող հույսերը[25]:

1628 թ. Էջմիածնի Դավիթ Դ Վաղարշապատեցի կաթողիկոսի աթոռակիցներից Սահակ Գառնեցին, չկարողանալով պարսից շահի օժանդակությամբ բազմել հայոց կաթողիկոսի գահին, հեռացավ Օսմանյան կայսրություն և սուլթանից հրաման կորզեց Արևմտյան Հայաստանում առանձին կաթողիկոսություն հիմնադրելու վերաբերյալ: Նրան սատար կանգնեց Կ. Պոլսի հայոց պատրիարք Զաքարիա Վանեցին: Հիմնվելիք կաթողիկոսության աթոռանիստ էր դառնալու Մշո Սուրբ Կարապետ (Գլակա) վանքը: Սահակ Գառնեցու ձեռնարկմամբ պառակտվելու էր Հայոց եկեղեցին, արևմտահայ ժողովուրդը, նրա եկեղեցիները պետք է կապերը խզեին Էջմիածնի Մայր Աթոռից:

Սահակ Գառնեցու պառակտիչ քայլերը բողոքի բուռն ալիք բարձրացրին Վասպուրականում և Հայաստանի մյուս մասերում: Սակայն չհաջողվեց նրան ետ կանգնեցնել իր անօրինական քայլերից: Այնժամ նրան դատապարտող հայերը, մեծ կաշառք տալով Օսմանյան կայսրության մեծ վեզիրին, խափանեցին Սահակի ձեռնարկումը[26]:

Նույն՝ 1628 թվականին հաջողվեց հարթել թեմական հողերի շուրջ Էջմիածնի ու Աղթամարի կաթողիկոսության միջև արծարծված վեճը: Էջմիածնի հայոց կաթողիկոս

---

[22] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 431:*

[23] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, սյունակ 493–494:*

[24] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 111:*

[25] *Տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, սյունակ 840:*

[26] *Տե՛ս Առաքել Դաւրիժեցի, էջ 209–213:*

Մովսես Գ Տաթևացին իր նվիրակին ուղարկեց Աղթամար՝ խնդրի շուրջ բանակցություններ վարելու Աղթամարի Ստեփանոս Ե կաթողիկոսի և նրա դասակիցների հետ: Հեռք բերված համաձայնությամբ՝ Աղթամարի հայրապետները կաթողիկոսի տիտղոսը կրելու էին միայն իրենց թեմերում, որոնց սահմանները ճշգրտվեցին[27]:

1662 թ. Աղթամարի կաթողիկոս Մարտիրոս Գուրջին քայլեր ձեռնարկեց ընդարձակելու իրեն ենթակա թեմերն՝ ի հաշիվ Էջմիածնի կաթողիկոսության իրավասության տակ գտնվող եկեղեցական վիճակների: Սակայն Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին կարողացավ ի դերև հանել Մարտիրոս Գուրջիի նկրտումները[28]:

Օսմանյան օրենսդրությունն արգելում էր օտար պետություններում գործող որևէ կազմակերպության կամ անհատի տնտեսական իրավազորությունն օսմանյան պետության սահմաններում բնակվողների կամ կազմակերպությունների նկատմամբ: Աղթամարի կաթողիկոսությունը դատապարտված էր կատարելու այդ պետության օրենսդրության պահանջները: Արևմտյան Հայաստանի թուրք փաշաներն ու քուրդ բեկերը ջանում էին բացառել Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա թեմերի կախվածությունն Էջմիածնի Մայր Աթոռից և այդպիսով խոչընդոտել վերջինիս ազդեցության պահպանմանն արևմտահայ գավառներում ու վերացնել նրա օգտին հասույթներ հավաքելը: Հատկանշելի փաստ է, որ 1662 թ. Վասպուրականի լճափնյա Ոստան քաղաքի քուրդ բեկը, ժամանելով Բաղեշ քաղաք, հրապարակավ հայտարարում է, որ «այսուհետև մի ոք իշխեսցէ զանուն Էջմիածնայ տալ՝ այլ Աղթամարայ»[29]: Քանի որ Բաղեշի բնակչության մեջ մեծամասնություն էին կազմում հայերը[30], ուստի այդ քաղաքի հայ եկեղեցականները բնակչության լայն աջակցությամբ, բուռն ընդդիմանում են բեկին, արգելում նրա մուտքը քաղաքի հայկական եկեղեցի: Սակայն խնդիրն այդքանով չի հանգուցալուծվում: Գործին միջամտում է անձամբ Էջմիածնի հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին, որը, ժամանելով Բաղեշ, բնակչությանը հորդորում է պահպանել հավատարմությունը հայոց Մայր Աթոռի նկատմամբ, նշում, որ նրա հետ կապերը խզող հայերն «ուրացողք կոչին. զի ուրանան զԱթոռն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»: Կաթողիկոսի ելույթից հետո գրգռված հայերը Բաղեշից վռնդում են ոչ միայն նշված բեկին, այլև քաղաքի խանին[31]: Տեղի ունեցածը չի վրիպում նաև օսմանյան կառավարության տեսադաշտից: Վերջինս հրահանգում է, որպեսզի Բաղեշի եկեղեցու թեմը մնա Էջմիածնի Աթոռի ենթակայության տակ[32]:

---

[27] *Այս մասին տե՛ս* Ն. Ա կ ի ն ե ա ն. *Մովսէս Գ Տաթևացի Հայոց կաթողիկոսն և իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 244:*

[28] *Տե՛ս* Մ ի մ ե ո ն Ե ր և ա ն ց ի. *Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 93–94:*

[29] *Դիւան Հայոց պատմութեան, հ. Ժ, հրատ. Գ. Աղանեանցի, Թիֆլիս, 1912, սյունակ 54–55:*

[30] *Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, աշխատ. Ա. Սաֆրաստյանի, Երևան, 1964, էջ 35: Տե՛ս նաև* Ш а р а ф - х а н Б и д л и с и. Шараф-наме, т. I. М., 1967, с. 387.

[31] *Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, հ. Ժ, սյունակ 54–55:*

[32] *Տե՛ս նույն տեղում, սյունակ 55, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 362–363:*

Էջմիածնի ու Աղթամարի միջև առնչությունները շարունակում են խորանալ նաև հետագա տարիներին: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ 1682 թ. Էջմիածնի Եղիազար կաթողիկոսի մոտ է ժամանում «կաթուղիկոսն Աղթամարայ և էառ օրհնութիւն ի նմանէ»[33]: Պատմագիրը նկատի ունի Աղթամարի Թովմա (Թումա) հայրապետին, որը, ըստ մեկ այլ աղբյուրում պահպանված վկայության, 1683 թ. Աղթամարից մեկնում է Ս. Էջմիածին՝ «բազում ընծայիւք, եպիսկոպոսօք, քահանայիւք և տանուտերօք... եւ ձեռնադրեցաւ ի Տեառն Եղիազարէ կաթուղիկոս Աղթամարայ»[34]: Ձեռնադրվելուց և մյուռոն ստանալուց հետո նա իր շքախմբի հետ մեծ պատիվներով ու նվերներով վերադառնում է Աղթամար: Եվ այնուհետև «եղեն յԷջմիածին և յԱղթամար մի հօտ և մի հովիւ»[35], վկայում է նույն հիշատակագրողը: Իսկ ըստ մեկ այլ աղբյուրի, Էջմիածնում Աղթամարի կաթողիկոսի ձեռնադրությամբ «եբարձ զբմբոստութիւն ի նախնեաց առաջնոց հայրապետաց և պապանձեցոյց զբերան երկաբնակացն»[36]:

Էջմիածնի Մայր Աթոռում Աղթամարի կաթողիկոսի ձեռնադրվելու փաստը հերքում էր երկաբնակ դավանություն քարոզողների տարածած լուրերն այն մասին, որ Հայոց եկեղեցին բազմագլուխ է, չունի ընդհանրական մեկ հովվապետ, քանզի ճանաչում է մեկից ավելի կաթողիկոսների[37]: Էջմիածնում Աղթամարի հայրապետի ձեռնադրվելը և մյուռոն ընդունելը, անշուշտ, վկայություն էր այն իրողության, որ վերջինս ճանաչում էր Եղիազար կաթողիկոսին որպես Հայոց Առաքելադրոշմ Եկեղեցու գերագահ Աթոռակալ և հնազանդվում էր նրան: Երկու Աթոռների համադաշն ուղերնթաց, իհարկե, էականորեն ամրակայացնում էր Աղթամարի գահակալի դիրքերը մի ժամանակ, երբ վերջինիս ենթակա թեմերում գործունեություն էին ծավալում լատին քարոզիչները, որոնց հաջողվեց իրենց ազդեցությունը տարածել նաև Մոկաց աշխարհում: 1693 թ. Աղթամարի այդ եկեղեցաթեմի եպիսկոպոս Մխիթար վարդապետն ընկավ նրանց ցանցը և մեկնելով կաթոլիկադավան Լեհաստան՝ «արար հանդիսապէս յեկեղեցւոջ զդաւանութիւն կաթուղիկէի հաւատոյ»[38]:

Անշուշտ, իրարամերժ երկու պետությունների տարածքներում գտնվելու իրողությունը փխրուն էր դարձնում հայոց երկու Աթոռների միջև հաստատված միությունը: Էջմիածնի Եղիազար կաթողիկոսի վախճանվելուց հետո Աղթամարի Թովմա կաթողիկոսը, իհարկե, օսմանյան իշխանությունների թելադրանքով, հրաժարվեց ճանաչել Էջմիածնի նոր կաթողիկոս Նահապետ Եղեսացու (1691–1705) գերագահությունը: Վերջինս, ի տրիտուր Թովմայի այդ քայլի, 1696 թ. ի դերև հանեց նրա կաթողիկոսական իրավունքները և Մայր Աթոռում Աղթամարի կաթողիկոս ձեռնադրելով Ավետիս եպիսկոպոսին՝ ուղարկեց Աղթամար: Բայց հաջորդ տա-

---

[33] *Զաքարիա Սարկաւագի Պատմագրութիւն, հ. II, Վաղարշապատ, 1870, էջ 106:*

[34] *Մատենադարան, ձեռ. 6333, թ. 79բ:*

[35] *Նույն տեղում:*

[36] *Բ. Ս ա ր գ ի ս ե ա ն. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 142:*

[37] *Մ. Օ ր մ ա ն ե ա ն. Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, սյունակ 3069–3071:*

[38] *Յ. Տ ա շ ե ա ն. Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 113:*

ռում Թովման, Վանի փաշայի սատարմամբ, իրեն փոխանորդ հռչակեց արծկեցի Սահակ եպիսկոպոսին, որին նույնիսկ օծեց կաթողիկոս՝ վերոնշյալ Ավետիս եպիսկոպոսին վտարելով Աղթամարից: Թովման հույս ուներ այդպիսով ապահովել Աղթամարի հայրապետական Աթոռի շարունակականությունը: Սակայն նա հաշվի չէր առել այն ծանրակշիռ փաստը, որ իր Աթոռի մշտատևության և հեղինակության պահպանման կայուն երաշխիք կարող էր ունենալ Էջմիածնի Մայր Աթոռի ծիսական, կանոնական իրավազորությունը ճանաչելու դեպքում: Հակառակ պարագայում դատապարտված էր մեկուսացվածության ու անզորության:

Երկու Աթոռների միջև անջրպետն ավելի խորացավ, երբ Վանի փաշան 1697 թ. Վանի եկեղեցաթեմը հանեց Էջմիածնի Մայր Աթոռի ենթակայությունից՝ այն դնելով Աղթամարի կաթողիկոսի իրավասության տակ[39]:

Փաշան կամենում էր Աղթամարի կաթողիկոսական Աթոռը կտրել Ս. Էջմիածնից, թուլացնել և դարձնել իր անխոս կամակատարը: Իհարկե, չպետք է անտեսել այն փաստը, որ օսմանյան գահակալները, ելնելով պետության գանձահասույթային շահերից, հաշվի էին առնում այն իրողությունը, որ Էջմիածնի Աթոռին ենթակա քրիստոնեական համայնքներից (հատկապես դեպի Երուսաղեմ կատարված ուխտագնացությունների ժամանակ) մեծ հարստություններ էին հոսում պետական գանձարան: Հատկանշական փաստ է, որ Բարձր դռան շահերին ներհակող հայոց կաթողիկոս Եղիազար Այնթապցին 1691 թ. Ահմեդ սուլթանի հրամանով աթոռազրկվեց[40]:

1746 թ. Աղթամարի կաթողիկոս Նիկողայոս Սպարկերտցին Վանի փաշայի և այդ կողմերի մահմեդականների հոգևոր առաջնորդի («մովպետի») օգնությամբ ձեռնամուխ եղավ Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա թեմերն ընդարձակելուն: Էջմիածնի կաթողիկոս Ղազար Ջահկեցին նախ բանադրեց Նիկողայոսին, ապա Կ. Պոլսի հայոց պատրիարքի միջնորդությամբ կարողացավ Մահմուդ I սուլթանից (1730–1754) ֆերման (հրաման) կորզել, որով ոչ ոք իրավասու չէր վիճարկելու Էջմիածնի կաթողիկոսի իրավունքներն Արևմտյան Հայաստանում[41]:

Իր հերթին Նիկողայոս կաթողիկոսը, հասկանալով, որ Էջմիածնի Աթոռի հետ հարաբերությունների սրումը կարող է վատթարացնել իր դրությունը, Էջմիածնի Ղազար կաթողիկոսին ուղարկում է «Հնազանդութեան և աղերսանաց» մի նամակ՝ խոստանալով, որ ինքն ու Աղթամարի իր դասակիցները «այնուհետև կաթողիկոսօք և վիճակօք՝ ի հնազանդութեան Սրբոյ Էջմիածնի և սորին Կաթողիկոսացն մնայցեն»: Ջահկեցին սիրահոժար արձագանքում է աղթամարցիներին և կանոնական կոնդակով Նիկողայոսին արձակում բանադրանքից՝ վերահաստատելով Աղթամարի կաթողիկոս, որի վախճանվելուց հետո առանց Էջմիածնի Մայր Աթոռի թույլտվության, ոչ ոք չպետք է բազմեր Աղթամարի կաթողիկոսի Գահաթոռին[42]:

---

[39] *Տե՛ս Ն. Ակինեան. Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 145:*

[40] *Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ց. -1, թղթ. 1, վավ. 51:*

[41] *Տե՛ս Սիմեոն Երևանցի. նշվ. աշխ., էջ 95:*

[42] *Նույն տեղում, էջ 96:*

Նիկողայոսին հաջորդած Աղթամարի Գրիգոր հայրապետի (1751–1761) օրոք վերստին հուզվեց Էջմիածնի Մայր Աթոռի հետ Աղթամարի կաթողիկոսության առնչության խնդիրը: Պատճառը Գրիգորի անհեռատես քայլն էր. նա ինքնագլխորեն խախտեց իր նախորդի օրոք երկու Աթոռների միջև հաստատված հաղորդակցությունը և հրաժարվեց ճանաչել Էջմիածնի հայոց հայրապետի գերագահությունը[43]: Դրանով իսկ ավելի բարդացավ Աղթամարի կաթողիկոսության կացությունը: Նրա իրավասության սահմանները դարձան փխրուն ու անհաստատ, քանի որ չէին ճանաչվում հայոց գերագահ Աթոռի՝ Ս. Էջմիածնի կողմից: Նկատենք նաև, որ Գրիգորի աթոռակալության տարիներին փոխադարձ կապեր չկային նաև Աղթամարի Աթոռի և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի միջև, այն դեպքում, երբ վերջինս կանոնական առնչություններ էր պահպանում Սսի կաթողիկոսական Աթոռի, ինչպես և Եգիպտոսի Ղպտիական եկեղեցու պատրիարքի հետ, որն ընդունում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքի գերակայությունը:

Ստեղծված իրավիճակում Աղթամարի կաթողիկոսությունը նորից դատապարտվեց մեկուսացվածության: Արդյունքում նրա իրավասության տակ եղած որոշ եկեղեցաթեմեր հաճախ դուրս էին գալիս նրա ենթակայությունից՝ ճանաչում Էջմիածնի Մայր Աթոռի կամ Կ. Պոլսի հայոց պատրիարքության իրավազորությունը: Այդպիսով, Մ. Օրմանյանի դիպուկ բնորոշմամբ, Աղթամարի Աթոռը «շարունակեալ անկման ճանբուն մէջ կը յառաջէր»[44]: Գրիգորից հետո Աղթամարի կաթողիկոս ընտրված Թովմա Բ-ը (1761–1783), թեև գահակալում է առանց Էջմիածնի կամակցության, բայց ելնելով իր Աթոռի անմխիթար վիճակից՝ գերադասում է հնազանդվել Մայր Աթոռին: Ինչպես հավաստում է Սիմեոն Երևանցին՝ Թովմա Բ-ը «թէ ի խղճէ հարեցեալ, եթէ ի բազմակոյտ պարտուց և ի պակասութեանցն բռնադատեցեալ», ժամանում է Ս. Էջմիածին՝ հնազանդություն հայտնելու Մայր Աթոռին: Ապա միաբանների և հոծախումբ բնակչության ներկայությամբ, Սուրբ պատարագի ժամին նա ծնկի է գալիս հայոց կաթողիկոս Հակոբ Ե Շամախեցու առջև՝ խնդրելով ազատ արձակել իր նախորդի մեղքով Աղթամարի Աթոռի նկատմամբ նորոգված նզովքը: Հակոբ հայրապետը կատարում է նրա խնդրանքը և «հաստատէ զնա կաթողիկոս Աղթամարու վիճակին»: Աղթամարի եկեղեցական թեմին ուղղված հատուկ կոնդակով Էջմիածնի գահակալը հաստատում է տակավին Էջմիածնի կաթողիկոս Ղազար Ջահկեցու և Աղթամարի Նիկողայոս հայրապետի օրոք երկու Աթոռների միջև կնքված ուխտադիր համաձայնությունը և պահանջում, որպեսզի Աղթամարի հոգևոր հայրերը հավատարիմ մնան այդ ուխտին, որը վերահաստատվում է «հանդերձ նզովիւք»: Միաժամանակ շեշտվում է, որ, առանց Էջմիածնի կաթողիկոսի իմացության, Աղթամարում նոր կաթողիկոս չպետք է ընտրել, իսկ ընտրելու դեպքում «առանց հրամանի կաթողիկոսացն Էջմիածնի մի՛ ընդունիցին»[45]: Աղթամարի Աթոռի նկատմամբ բանադրանքը կարող էր վերականգնվել նշված համաձայնության խախտման դեպքում: Այնուհետև Հակոբ Ե կաթողիկոսը Թովմա Բ-ին է հանձնում վերոնշյալ

---

[43] *Նույն տեղում:*

[44] *Մ. Օ ր մ ա ն է ա ն. Ազգապատում, հ. Բ, սյունակ 3317:*

[45] *Մ ի մ է ո ն Ե ր և ա ն ց ի. նշվ. աշխ., էջ 97:*

կոնդակը և պատիվներով ու հայրապետական շքազգեստով ճանապարհում Աղթամար: Այդպիսով կանոնական հիմքերի վրա է դրվում հայոց բնաշխարհի երկու Աթոռների միությունը: Հայությանը ծվատող կրոնական հալածանքների, բռնադատումների ու ազգային խտրականության պայմաններում այդ միությունը բարեգուշակ գործոն էր ազգային ու հոգևոր ընդհանրության պահպանման համար:

Թովմա Բ հայրապետը հավատարիմ մնաց երկկողմ այդ ուխտադրությանը, շարունակեց Ս. Էջմիածնի Աթոռից ստանալ սուրբ մյուռոնն ու բաշխել իր եկեղեցու թեմերին, որով իսկ մեռոնօրհնեքը վերապահվում էր միայն ընդհանրական Աթոռին[46]: Վերջինիս գործուն աջակցությամբ Աղթամարի հայրապետը կարողացավ ամրապնդել իր դիրքերը: Հարկ է նշել, որ տեղացի մահմեդական իշխողները շարունակում էին խոչընդոտել Էջմիածնի ու Աղթամարի միջև հաստատված միությանը: 1764 թ. Մոկքում իշխող Աբդուլա բեկի հարկադրանքով Մոկաց Աբրահամ եպիսկոպոսը հրաժարվում է ենթարկվել Աղթամարի Թովմա Բ կաթողիկոսին՝ փորձելով գահակալել որպես ինքնուրույն կաթողիկոս: Աբրահամը «բռնութեամբ եւ ուժով քրտաց պարոնին, ժողովէր զտեղւոյն զառաջնորդական եւ զնուիրական հասս եւ զիրաւունս եւ տայր բէկին, եւ ինքն եւս մսխէր...»[47], ասվում է մի հիշատակագրության մեջ: Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, ընդառաջելով Թովմա Բ-ի խնդրանքին, սպառնում է Աբրահամ եպիսկոպոսին բանադրանքով, եթե նա շարունակեր իր պառակտիչ քայլերը[48]: Սպառնալիքն ունեցավ իր ազդեցությունը. Աբրահամը ետ կանգնեց իր մտադրությունից:

Սիմեոն Երևանցուն հաջորդած Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի օրոք (1780–1799) պահպանվեցին երկու Աթոռների միջև ձևավորված ծիսական ու կանոնական կապերը: 1783 թ. վախճանվեց Աղթամարի Թովմա Բ կաթողիկոսը: Վանեցիները գրավոր դիմում հղեցին Ղուկաս կաթողիկոսին՝ տեղեկացնելով Աղթամարի Աթոռի «և միաբանից նորին և բոլոր թեմնացի իշխանաց և ժողովրդոց» անտերունչ ու անայցելու մնալը՝ խնդրելով հրաման տալ կաթողիկոս օծել Աղթամարի Աթոռում: Ղուկաս կաթողիկոսը «հայրական սիրով գթացեալ»՝ հրաման է տալիս կաթողիկոս օծել Աղթամարում, պայմանով, որ օծելուց հետո նա ժամանի Ս. Էջմիածին՝ «առ ի վերահաստատել զկաթողիկոսական իշխանութիւնն… նորին»: Աղթամարի նորօծյալ Կարապետ հայրապետը պարտավոր էր «կալ հաստատուն ի ներքոյ իշխանութեան և հնազանդութեան սրբոյ Աթոռոյս և հայրապետացն սորին մինչև ի սպառիլ շնչոյն»[49]: Հետագա տարիներին շարունակվում են երկու Աթոռների միջև ձևավորված շփումները, խորհրդատվությունները, որոնք թեև երբեմն ընդհատվում էին, բայց Ս. Էջմիածնի հայրապետների լայնախոհության շնորհիվ իսպառ չէին խզվում: Կրկնենք, տարբեր պետություններում

---

[46] *Տե՛ս նույն տեղում:*

[47] *Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, հ. Գ, հրատ. Գ. Ադանեանցի, Թիֆլիս, 1894, սյունակ 116–118:*

[48] *Տե՛ս նույն տեղում:*

[49] *Դիւան Հայոց պատմութեան, հ. Դ, սյունակ 495–497, Ն. Ակինեան. Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 159–161:*

գտնվելը թեև նվազեցնում էր Ս. Էջմիածնի և Աղթամարի Աթոռների միջև հաստատված առնչությունները, սակայն դրանք չէին դադարում կողմերի նպատակամետ ջանքերի շնորհիվ: Դա, անշուշտ, հարուցում էր մահմեդական իշխանությունների դժգոհությունը: 1823 թ. նահատակվում է Աղթամարի կաթողիկոս Հարությունը: Նրան հաջորդած Հովհաննես Շատախեցին, հավանաբար, տեղական իշխանություններին չգրգռելու համար, հրաժարվում է Էջմիածին մեկնելուց և ձեռնադրվում է Աղթամարում, Աբրահամ եպիսկոպոսի կողմից[50]:

Հարկ է նշել, որ Աղթամարի Աթոռը միաժամանակ մնում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հսկողության ներքո և նրա միջոցով էր հարաբերությունների մեջ մտնում օսմանյան սուլթանի հետ: Ուստի, 1851 թ. Վանում կայացած ժողովում Աղթամարի միաբանները տեղացի աշխարհականների հետ կաթողիկոս են ընտրում Գաբրիել Շիրոյանին և, դիմելով Պոլսի հայոց ազգային ժողովին, խնդրում են նրան ճանաչել Աղթամարի կաթողիկոս: Նույն թվականի դեկտեմբերին Ազգային ժողովը բավարարում է նրանց խնդրանքը, իսկ հաջորդ տարվա հունվարի 31-ին Պոլսի հայոց պատրիարքը դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցուն՝ իրենց կայացրած որոշումը հաստատելու խնդրանքով: Սակայն Ներսես կաթողիկոսը ոչ միայն չի տալիս իր համաձայնությունն այդ որոշմանը, այլև նույն թվականի հունիսի 16-ին պատրիարքարան է ուղարկում խստաշունչ կոնդակ, որով դատապարտվում էր առանց իր կամքը հաշվի առնելու Գաբրիել Շիրոյանին Աղթամարի կաթողիկոս ընտրելը և մերժում վերջինիս կաթողիկոս օծվելը[51]:

Գաբրիել Շիրոյանը հարկադրված եղավ նույն թվականին հրաժարականի դիմում ներկայացնել Պոլսի հայոց պատրիարքարանին, որը, սակայն, մերժում է նրա դիմումը[52]: Շիրոյանն ստիպված գահակալում է Աղթամարում՝ առանց կաթողիկոս օծվելու: 1858 թ. մարտի 17-ին Պոլսի հայոց պատրիարքարանի Ընդհանուր ժողովի վավերացրած պայմանագրով Աղթամարի կաթողիկոսը պարտավոր էր «ճանաչել և ընդունիլ թէ սրբազան կաթողիկոսն սրբոյ Էջմիածնի է միակ վեհագոյն կաթողիկոս և ծայրագոյն պատրիարք Արևելեան աշխարհաց և օրինաւոր յաջորդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի»: Աղթամարի հայրապետը նաև պարտավոր էր Էջմիածնի կաթողիկոսի նկատմամբ հպատակությունը պահպանել նաև «ի բանս հաւատոյ և… ի բարեձեւութիւնս ծիսից և պաշտամանց»: Նաև շեշտվեց, որ ընտրվելուց հետո Աղթամարի կաթողիկոսը պարտավոր էր Էջմիածնի հայոց հայրապետին ներկայացնել «Գիր խոնարհութեան և հպատակութեան»: Նշվեց նաև, որ Էջմիածնի կաթողիկոսը կամ Արարատյան «Սրբագումար սինոդը» անհրաժեշտ դեպքում Աղթամարի հայրապետին կհրավիրի Ս. Էջմիածին՝ ձեռնադրվելու, կամ մեկ-երկու եպիսկոպոս կուղարկեն Աղթամար, որպեսզի տեղում ձեռնադրեն նրան: Վերջինս հնազանդվելու էր Էջմիածնի Աթոռին, «զի սրբեսցէ զբիծ արատաւորութեան իւրոյ հակաթոռ լինելոյ»:

---

[50] *Տե՛ս Խ. Լ ևոնեան. Աղթամարայ կաթողիկոսները սկիզբէն ցվերջ.– «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս), 1900, -2031:*

[51] *Տե՛ս Մ. Իզմիրլեան. նշվ. աշխ., էջ 359–360:*

[52] *Տե՛ս «Բիւզանդիոն», 1900, -1202:*

Ընդսմին՝ Աղթամարի գահակալին իրավունք էր վերապահվում ս. մյուռոն օրհնել և ձրի բաշխել միայն իր վիճակում: Պայմանագրում նաև արձանագրվեց, որ պատարագ մատուցելիս Աղթամարի կաթողիկոսը պետք է հիշատակեր «զբարձրագահ կաթողիկոսն Սրբոյ Էջմիածնի, որ է նշան հպատակութեան և լինելոյ ընդ իրաւասութեամբ նորա»[53]:

1859 թ. Էջմիածնի հայոց կաթողիկոս Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցին (1858–1865) նամակով դիմում է Բարձր դռան վառոդապետ Հովհաննես բեյին, խնդրում պատրիարքի օժանդակությամբ Վասպուրականի հայերին ազատել անկարգություններից և հարստահարություններից, որոնք կաթողիկոսի կարծիքով հետևանք էին Աղթամարի կաթողիկոսի (նկատի ունի Գաբրիել Շիրոյանին) գործունեության[54]:

1860 թ. Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի կողմից ընդունված և 1863 թ. սուլթանի հաստատած կանոնադրությամբ («Ազգային Սահմանադրությամբ») պետք է կարգավորվեր արևմտահայության ներքին կյանքը: 1873 թ. Վասպուրական այցելած Երեմիա Տեկանցն իր նոթերում արժեքավոր տվյալներ է հիշատակում Աղթամարի կաթողիկոսության մասին: Նա նշում է, որ տեղացի «ժողովուրդն երբեք ջանադրություն չունի վերստին կաթողիկոս վերահաստատել ի Աղթամար, այլ շատերեն լսեցի, որք ասեին՝ ազգին մի կաթողիկոս բավական է, և ահա Սուրբ Էջմիածին հինգ ավուր ճանապարհ հազիվ թե հեռի է մեզմե. Թող մեզ պաշտպանություն ընե Վեհափառ Գեորգ կաթողիկոս…»[55]: Թվում էր, թե Աղթամարի կաթողիկոսությունը կանգնած է լուծարման եզրին, բայց դա տեղի չունեցավ, քանի որ 1866 թ. ապրիլին դրան դեմ արտահայտվեցին Էջմիածնի Մայր Աթոռը և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը՝ գտնելով, որ անհրաժեշտ է պահպանել Մայր հայրենիքում «արդեն հաստատուած և դարաւոր տևողութեամբ մշտնջենաւորելու ոյժ և ամրութիւն ստացած» Աղթամարի կաթողիկոսական Աթոռը[56]: Նույն տարվա սեպտեմբերի 17-ին արևմտահայ պատգամավորները մասնակցեցին Էջմիածնի հայոց կաթողիկոս Գեորգ Դ Կոստանդնուպոլսեցու ընտրությանը, ինչը նույնպես վկայում էր, որ նրանք, այդ թվում նաև Աղթամարի աթոռակալը ճանաչում էին Էջմիածնի Մայր Աթոռը՝ որպես Ամենայն հայոց գերագահ Աթոռ: Հայոց կաթողիկոսի ընտրությունը միայն այդ կերպ կարող էր համազգային լինել[57]:

1870-ական թվականներից Աղթամարի կաթողիկոսության ազդեցությունը գնալով ավելի էր թուլանում, այն դեպքում, երբ Էջմիածնի հայոց ընդհանրական Գահաթոռը, գտնվելով Ռուսական կայսրության կազմում, ավելի կայուն, հուսալի վիճակում էր և ազատագրվելու հույսեր էր սնուցում արևմտահայության լայն խավերում:

Աղթամարի կաթողիկոսության վատթարացող կացությունը 1872 թ. քննության առավ Ազգային կեդրոնական վարչության հանձնաժողովը, որը, ծանոթանալով Աղթամարի

---

[53] *Մ. Իզմիրլեան. նշվ. աշխ., էջ 405–408:*

[54] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ց. -15, թղթ. 188, վավ. 57:*

[55] *Երեմիա Տեկանց. Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872–1873 թթ., աշխատ. Հ. Պողոսյանի, Երևան, 1991, էջ 220:*

[56] *Մ. Իզմիրլեան. նշվ. աշխ., էջ 532–533:*

[57] *Տե՛ս Կաթողիկոսական ընտրութիւն եւ կանոններ, Վաղարշապատ, 1908, էջ 71–72:*

կաթողիկոսության գործերին (1864–1870 թթ. ընթացքում), գտավ, որ Աղթամարի կաթողիկոս Պետրոսն իր ապօրինի արարքներով լիովին հեղինակազրկվել է՝ հարուցելով թեմական ժողովրդի դժգոհությունը[58]:

Այդուամենայնիվ, Էջմիածնի Գեորգ Դ կաթողիկոսը հակված էր այն մտքին, որ չնայած Աղթամարի կաթողիկոսության ներսում և նրա թեմերում ստեղծված դրությանը, պետք է պահպանել եկեղեցական այդ կենտրոնը: Մ. Օրմանյանի կարծիքով՝ Գեորգ հայրապետն «ավելի բարձրացուցած կըլլար Մայրաթոռոյ դիրքը, երբոր զինքն յարգող և գլուխ ճանաչող կաթողիկոսական Աթոռներ ալ գտնվեին»[59]:

Աղթամարի ու Ս. Էջմիածնի Աթոռների միջև կապերը պահպանվեցին և նույնիսկ ընդլայնվեցին Գեորգ Դ-ին հաջորդած Մակար Թեղուտցու (1886–1892) օրոք: Վերջինիս ընտրության տարում (1886 թ.) Ս. Էջմիածնում ձեռնադրված եպիսկոպոսների ուխտագրի միջից հանվեց Աղթամարի ու Սսի Աթոռներն անվավեր և «հեստյալ» (անհնազանդ) համարելու վերաբերյալ կետը[60]: Ընդհուպ մինչև 1895 թ. արևմտահայերի ցեղասպանությունը շարունակվեց հաղորդակցությունը բնաշխարհի հայոց երկու Աթոռների միջև: Սակայն այդ թվականին Աղթամարի կաթողիկոսությունը լուծարվեց: Նրան ենթակա եկեղեցաթեմերը դրվեցին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կազմած Տնօրեն խորհրդի իրավասության տակ:

ОБ ОТНОШЕНИЯХ СВ. ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА ВСЕХ АРМЯН И АХТАМАРСКОГО ПРЕСТОЛА

(XII в. – конец XIX в.)

ВРЕЖ ВАРДАНЯН

Р е з ю м е

Ахтамарский престол (основан в 1113 г.) имел контакты с некоторыми церквами северо-восточной Армении. Однако католикосат всех армян, находясь вне пределов Армении, желая сохранить целостность и иерархичность церкви, в 1114 г. подверг анафеме Ахтамарский католикосат. Из-за этого вплоть до 1441 г., когда Эчмиадзин вновь стал первопрестольным центром Армянской Апостольской церкви, между двумя престолами отсутствовали канонические и обрядовые связи, имели место религиозные разногласия. В создавшихся условиях ахтамарские католикосы в подвластных им епархиях сохраняли за собой духовные функции, самостоятельно решая церковные дела, входящие в их компетенцию. Они сохраняли верность Никейскому символу веры и выступали защитниками армянского вероисповедания против иных вероучений. Находясь

[58] *Տե՛ս Տեղեկագիր խառն հանձնաժողովոյ Աղթամարայ Աթոռոյ կաթողիկոսական խնդրոյն 1872 թ. նոյեմբեր 15, Կ. Պոլիս, 1873, էջ 6–7:*

[59] *Մ. Օ ր մ ա ն է ա ն. Ազգապատում, հ. Գ, Ս. Էջմիածին, 2001, սյունակ 5105:*

[60] *Տե՛ս նույն տեղում, սյունակ 5249:*

под властью иноверных завоевателей и не имея политической самостоятельности, народ Южной Армении возлагал свои надежды на Ахтамарский престол, который в основном имел взаимосвязь с Эчмиадзинским католикосатом всех армян. Благодаря этим отношениям, Ахтамарский престол сохранял свое религиозное влияние и престиж среди населения Южной Армении.

ON THE RELATIONS BETWEEN THE CATHOLICOSATE OF ALL ARMENIANS OF ST. ETCHMIADZIN AND THE THRONE OF AKHTAMAR
(The 12th c. – the end of the 19th c.)

VREZH VARDANYAN

S u m m a r y

The throne of Akhtamar (founded in 1113) contacted with some Armenian churches in the north-east of Armenia. Wishing to save the integrity and hierarchy the Catholicosate of All Armenians, which was beyond the country, fulminated anathema to Akhtamar Catholicosate in 1114. After these events, till 1441, when Etchmiadzin became the first centre of Armenian Apostolic church again, there weren't any ceremonial and canonical connections between these two Armenian churches. They had religious deferences, but Akhtamar Catholicoses kept solving independently their ecclesiastical functions. They kept Nika's faith and came out as defenders for Armenian religion. All the nations of South Armenia laid their hopes on Akhtamar throne, which had contacts with Etchmiadzin Catholicosate of All Armenians, as they were under the power of foreign inventors. Owing to these contacts the throne of Akhtamar kept its religious influence and image among the inhabitants of South Armenia.